



# Կապարի ազդեցությունը մանկան առողջության վրա

Կապարը շրջակա միջավայրում չափազանց տարածված բնական թունավոր մետաղ է: Հետևաբար, դրա ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա շատ լավ ուսումնասիրված է: Այս քաղցկեղածին մետաղը և դրա միացությունները համարվում են պոլիտրոպիկ թույներ, այսինքն՝ դրանք ներգործում են մարդու տարբեր օրգանների և համակարգերի վրա: Կապարն ամենամեծ վտանգն է ներկայացնում երեխաների համար: Պատահական չէ, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) կապարը նշել է որպես հանրային առողջության հիմնական մտահոգության 10 քիմիական նյութերից մեկը:

ԱՀԿ հանրային առողջության և շրջակա միջավայրի հարցերով փորձագետի գնահատմամբ՝ կապարի ազդեցությունը տարեկան հանգեցնում է 143000 մահվան, ընդ որում՝ դեպքերի գերակշիռ մասը բաժին է ընկնում զարգացող երկրներին: Երեխաների վրա կապարի ազդեցությունն ամեն տարի հանգեցնում է մտավոր գործունեության խանգարման մոտ 600000 նոր դեպքի, ընդ որում՝ այդ երեխաների 90 % -ը նույնպես ապրում է երրորդ աշխարհի երկրներում:

Կապարով թունավորումների նկատմամբ հատկապես խոցելի են փոքր տարիքի երեխաները, քանի որ նրանց օրգանիզմն իրենց քաշի համեմատ 4-5 անգամ ավելի շատ կապար է կլանում, քան մեծահասակներինը:



Հետաքրքրասիրության և այս տարիքում ձեռքերը դեպի բերանը տանելու սովորության պատճառով երեխաները հաճախ կոչ են տալիս կապարով աղտոտված հող, փոշի կամ շերտազատված կապարային ներկ: Ազդեցության այս ուղին նկատվում է հատկապես սննդային խանգարում ունեցող երեխաների մոտ, որը դրսևորվում է սննդի համար ոչ պիտանի իրեր ուտելու անհագ ցանկությամբ:

Կարևոր է իմանալ, որ կապարով թունավորումը հեշտությամբ կարելի է կանխել:

- Կապարով թունավորումներից խուսափելու լավագույն ելքը բնակելի և (կամ) հասարակական շինությունների ներքին մակերեսների, կահույքային արտադրանքի, մանկական խաղահրապարակների, երեխաների և չափահասների համար նախատեսված արտադրանքների և ատրակցիոնների ներկման համար կապար պարունակող ներկերը ջրային հիմքով ներկերով փոխարինումն է:

- Կապարի հիմքով լաքաներկային նյութերի օգտագործման դեպքում կապարի պարունակությունը չոր նյութի հաշվով չպետք է գերազանցի 0,009 %-ը:

- Մինչ օրս երկրների միայն 37%-ն է սահմանել կապարի հիմքով ներկերի օգտագործման սահմանափակումներ: Հետևաբար, ավելի շատ ջանքեր են հարկավոր կապարային ներկերի արտադրությունը դադարեցնելու համար:

ջրային հիմքով ներկ

≤0,009%

# Կապարով թունավորման հետևանքները երեխայի օրգանիզմի համար



Կապարը, ներթափանցելով մարդու օրգանիզմ, հանգեցնում է սուր կամ քրոնիկական հիվանդությունների և ժամանակի ընթացքում կուտակվում է ուղեղում, երիկամներում, յարդում, ոսկորներում և այլ օրգաններում: Հիության ընթացքում ոսկրերում կուտակված կապարը կարող է ընկերքի միջոցով թափանցել արյան մեջ և ազդել պտղի զարգացման վրա:

Կապարի ազդեցությանն առավել ենթակա են թերսնված երեխաները, քանի որ նրանց օրգանիզմը կալցիումի կամ երկաթի անբավարար քանակի դեպքում ավելի շատ կապար է կլանում:

Կապարի ցածր մակարդակներով ազդեցությունը կարող է հանգեցնել երեխայի մտավոր զարգացման գործակցի (IQ) նվազման, վարքագծի այնպիսի փոփոխությունների, ինչպիսիք են ուշադրության կենտրոնացման կարճ տևողությունը, հակասոցիալական վարքի ուժեղացումը (չափից դուրս դուրսագրգիռ վիճակը կամ շրջապատողների հետ շփվելու



ցանկության բացակայությունը), գիտելիքների յուրացման խանգարումը: Կապարի ազդեցությունը նաև առաջացնում է սակավարյունություն (անեմիա), հիպերտոնիա, երիկամային անբավարարություն, իմունային անբավարարություն և վերարտադրողական օրգանների գործառոյթների խաթարում: Կապարի ազդեցության նյարդաբանական և վարքագծային հետևանքները համարվում են անդառնալի:

Կապարի ազդեցության բարձր մակարդակի դեպքում խաթարվում է ուղեղի և կենտրոնական նյարդային համակարգի աշխատանքը՝ հանգեցնելով կոմայի, ջղաձգումների և նույնիսկ մահվան: Արյան մեջ կապարի «անվտանգ» չափաքանակ չկա: Արյան մեջ կապարի նույնիսկ 5 մկգ / դլ մակարդակը կարող է երեխաների մոտ առաջացնել մտավոր թերզարգացում, վարքագծային խանգարումներ և սովորելու դժվարություններ:

Բարեբախտաբար, շատ երկրներում կապարով բենզինի արտադրության և օգտագործման դադարեցումը, ինչպես նաև այս մետաղի օգտագործման այլ սահմանափակող միջոցառումները հանգեցրել են արյան մեջ կապարի խտության զգալի նվազմանը:

Փորձագետները հիշեցնում են, որ չի կարելի սնունդը եփել և պահել դեկորատիվ ճենապակյա կամ կերամիկական տարաներում, քանի որ շատ հաճախ ջնարակը, դեղին և կարմիր գունանյութերը պարունակում են կապարի աղեր, որոնք հեշտությամբ անցնում են սննդի մեջ:



Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝ «Աղտոտիչների վերացման հարցերով միջազգային ցանց»-ի (IPEN) ֆինանսավորմամբ իրականացվող «Կապարով թունավորումների կանխարգելման գործողությունների միջազգային շաբաթ»-ի շրջանակում:



«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ  
ՀՀ, Երևան, 0019, Բաղրամյան պող. 24 բ  
Հեռ.՝ (+374 10) 52 36 04  
Էլ. փոստ՝ office@awhhe.am  
Վեբ կայք՝ <http://www.awhhe.am>